DocuSign Envelope ID: 4E6E5AD6-4496-485F-B984-DF059863B39C

ՈՐՈՇՈՒՄ թիվ 20-33

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԳԼԵՆԴԵԼԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «COVID-19»-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլուխը նախատեսում է, որ տեղական արտակարգ դրությունները կարող են հայտարարվել քաղաքային խորհրդի կողմից, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ 2020 թ. մարտի 16-ին Գլենդել քաղաքի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, ընդունեց Որոշում թիվ 20-28-ը՝ հայտարարելով տեղական արտակարգ դրություն, որի անհրաժեշտությունն առաջացել էր «Կորոնավիրուս 2019» (COVID-19) հիվանդության նկատմամբ աճող մտահոգությունից՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով: Վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ հաստատված դեպքերի քանակը կարճ ժամանակահատվածում շարունակել է կտրուկ աճել, և Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնը (CDC) տեղեկացնում է, որ COVID-19-ը հեշտությամբ տարածվում է մարդուց մարդ, և մշակել է ուղեցույցներ՝ առաջարկելով, որ հասարակությունն ընդունի այնպիսի քաղաքականություն և սահմանված կարգեր, որ հնարավոր լինի պահպանել սոցիալական հեռավորություն: Բացի այդ, 2020 թ. մարտի 16-ին քաղաքային խորհուրդը կարգադրեց նաև փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա;

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ 2020 թ.-ի փետրվարի 26-ին Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնը (CDC) հաստատեց ԱՄՆ-ում COVID-19-ի՝ մարդուց մարդ փոխանցման տեղական առաջին դեպքը, և այս դեպքը բարձրացրեց COVID-19-ի՝ համայնքնային փոխանցման հնարավորությունը՝ լայն հասարակության շրջանում: Լոս Անջելեսի վարչաշրջանի առողջապահության պաշտոնակատարը որոշեց, որ Լոս Անջելեսի վարչաշրջանում COVID-19-ի ներթափանցման պայմաններում առկա է հանրության առողջությանը սպառնացող մոտալուտ և վերահաս վտանգ, և ըստ այդմ՝ հայտարարեց տեղական առողջապահական արտակարգ դրություն; և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ 2020 թվականի մարտի 11-ին ԱՀԿ-ն COVID-19-ը բնութագրել է որպես համաճարակ, իսկ 2020 թվականի մարտի 12-ի դրությամբ ամբողջ աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերը գերազանցում են 169,000-ը, և վիրուսից մահացել է ավելի քան 6500 մարդ: Լոս Անջելեսի շրջանը հաղորդել է մոտավորապես 69 հաստատված և մահվան ելքով մեկ դեպքի մասին: Հաստատված

DocuSign Envelope ID: 4E6E5AD6-4496-485F-B984-DF059863B39C

դեպքերի քանակը կարճ ժամանակահատվածում շարունակել է կտրուկ աճել: Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնը (CDC) տեղեկացնում է, որ COVID-19-ը հեշտությամբ տարածվում է մարդուց մարդ, և մշակել է ուղեցույցներ՝ առաջարկելով, որ հասարակությունն ընդունի այնպիսի քաղաքականություն և սահմանված կարգեր, որ հնարավոր լինի պահպանել սոցիալական հեռավորություն; և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ Գլենդելի քաղաքապետարանը վերստին կրկնապատկել է իր ջանքերը՝ ուղղված ձեռքերի հիգիենայի, շնչառական կանոնների և սոցիալական հեռավորության պահպանմանը: Չափազանց կարևոր է, որ մենք՝ որպես քաղաք, անենք հնարավոր ամեն ինչ՝ դանդաղեցնելու հիվանդության տարածման տեմպերը համայնքներում և խուսափելու մեր բժշկական համակարգի անհարկի ծանրաբեռնվածությունից: Մեր ջանքերին նպաստելու նպատակով՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի համաձայն՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը լիազորված է կազմել և արձակել կանոնակարգեր և կարգադրություններ այն հարցերի շուրջ, որոնք կապված են նման արտակարգ իրավիճակների հետևանքով կյանքի և սեփականության պաշտպանությանը՝ այն պայմանով, որ այս կանոնակարգերը և կարգադրությունները պետք է հաստատվեն Քաղաքային Խորհրդի կողմից, որքան հնարավոր է շուտ; և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84.090 բաժնով նախատեսված կարգով և թիվ 20-28 որոշման համաձայն՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը տվել է արտակարգ դրության այդպիսի հասարակական կարգադրություններ; և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ Խորհուրդը ընդունել է նաև թիվ 20-29 որոշումը, որով հայտարարում է հանրային կարգադրություններ՝ բարերի, խնջույքների սրահների, գիշերային ակումբների, ռեստորանների, կինոթատրոնների, կենդանի կատարման վայրերի, բոուլինգի սրահների, խաղային ավտոմատների սրահների, զվարճանքի նման այլ հաստատությունների, մարզասրահների և ֆիթնես կենտրոնների փակման վերաբերյալ:

ՀԵՏԵՎԱԲԱՐ՝ ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ՝

ԲԱԺԻՆ 1. Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի հետևյալ հասարակական կարգադրությունները վավերացվում են (ըստ փոփոխվածի) և երկարաձգվում՝ մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը.

A. Գլենդելի հասարակական կարգադրություն թիվ 2020-01: (Մեծահասակների ցերեկային խնամքի հաստատությունների վերաբերյալ): Գլենդել քաղաքում գտնվող մեծահասակների ցերեկային խնամքի բոլոր հաստատությունները պետք է փակվեն: Այս փակման կարգի նպատակն է կանխել մեծահասակների մեծ խմբերի՝ մասնավորապես՝ տարեց քաղաքացիների հավաքվելը կամ համախմբվելը մեկ վայրում՝ փորձելով կանխարգելել նոր տիպի կորոնավիրուսի՝ COVID-19-ի տարածումը:

DocuSign Envelope ID: 4E6E5AD6-4496-485F-B984-DF059863B39C

B. Գլենդելի հասարակական կարգադրություն թիվ 2020-02 (Թվայնացված ստորագրությունների մասին): Սոցիալական հեռավորության պահպանման լրացուցիչ հնարավորության և միևնույն ժամանակ Գլենդելի քաղաքապետարանին և հանրությանը իրենց բիզնեսը ապահով կերպով վարելու հնարավորություն ընձեռելու համար՝ հրամանագիր թիվ 5948-ը, որն ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից 2020 թ. մարտի 10-ին, և ուժի մեջ է մտնում 2020թ. ապրիլի 9-ին, որով Գլենդելի 1995 թ. Քաղաքային օրենսգրքի 1-ին խորագրին ավելացվում է 1.13-րդ կետը, որը թույլ է տալիս Գլենդել քաղաքին փաստաթղթերի վրա օգտագործել թվայնացված և էլեկտրոնային ստորագրություններ՝ գործող պետական օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, պետք է իրականացվի անհապաղ՝ թիվ 5948 հրամանագրով թույլատրված նույն կարգով՝ մինչև հրամանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

C. Գլենդելի հասարակական կարգադրություն թիվ 2020-03. (բնակելի և կոմերցիոն վարձակալությունների մասին)։ Եթե Գլենդել քաղաքում այս տեղական արտակարգ դրության ընթացքում վարձակալը ի վիճակի է ներկայացնել փաստաթղթեր՝ ցուցադրելու վարձավճարը վճարելու իր անկարողությունը՝ COVID-19 համաճարակի հետ կապված հանգամանքների պատճառով, ապա ոչ մի տանտեր չպետք է անօրինական վարձակալի հայց ներկայացնի բնակելի կամ առևտրային նշանակության տարածքի վարձակալի դեմ, ներառյալ՝ այն վարձակալների, որոնց վարձավճարը սուբսիդավորվում է որևէ պետական գործակալության կողմից, որը ներառում է, բայց չի սահմանափակվում դաշնային կառավարության կողմից Բնակարանների ընտրության վաուչերի ծրագրի (Բաժին 8) սուբսիդավորումով: Այսպիսի հանգամանքները ներառում են եկամուտի կորուստը՝ COVID-19- ի հետ կապված աշխատատեղերի փակման կամ ժամերի կամ գործունեության կրճատման հետևանքով, երեխաների խնամքի ծախսերը՝ դպրոցների փակվելու պատճառով, COVID-19-ով հիվանդ լինելու հետ կապված առողջապահական ծախսերը կամ վարձակալի տան անդամներից մեկի COVID-19- ով հիվանդության խնամքի հետ կապված առողջապահական ծախսերը, կամ այնպիսի ողջամիտ ծախսերը, որոնք առաջացել են կառավարության կողմից հրահանգված արտակարգ դրության միջոցառումների արդյունքում: Վերը նշված մեկ կամ մի քանի պատճառներով վարձավճարը վճարել չկարողանալու մասին պետք է տանտիրոջը տրամադրվի գրավոր ծանուցում՝ վարձավճարի վճարման օրվանից 14 օր առաջ, բացառությամբ ապրիլ ամսվա վարձավճարի համար, որի դեպքում այդ ծանուցումը պետք է արվի, որքան հնարավոր է շուտ: Այս ենթաբաժնում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ վարձակալը, այնուամենայնիվ, չի պարտավորվելու վճարել օրինական գանձվող վարձավճարները: Տեղական արտակարգ դրության ժամանակի լրանալուց հետո վարձակալներին կտրվի վեց ամիս՝ հետ վճարելու սահմանված ժամկետանց վարձավճարները: Վարձակալները կարող են օգտագործել այս ենթաբաժնում տրամադրված պաշտպանող դրույթները՝ որպես հաստատող պաշտպանություն անօրինական վարձակալի հայց ներկայացնելու գործողությունում: Բացի այդ, այս աննախադեպ արտակարգ իրավիճակների ժամանակ Գլենդելի բնակիչներին օգնություն և պաշտպանություն ապահովելու նպատակով՝ սույնով սահմանվում է վարձավճարների բարձրացման սառեցում, որն ուժի մեջ է մտնում անմիջապես, որի միջոցով բնակելի տարածքի վարձակալների համար բոլոր վարձավճարները կմնան

DocuSign Envelope ID: 4E6E5AD6-4496-485F-B984-DF059863B39C

նույնը, ինչ սույն որոշման ամսաթվի դրությամբ և տեղական արտակարգ դրության ընթացքում:

D. Գլենդելի հասարակական կարգադրություն թիվ 2020-04 (Զբոսայգիների և քայլուղիների փակումը): Բոլորի առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու նպատակով՝ ի պատասխան COVID-19-ի բռնկման՝ փակվում են քաղաքի բոլոր քայլուղիները և բոլոր սպորտային դաշտերը/խաղահրապարակները, քաղաքի սեփականություն հանդիսացող բոլոր դաշտերն ու սարքավորումները, այգիները և հանգստի գոտիները:

ԲԱԺԻՆ 2. Գլենդելի քաղաքային խորհրդի N 20-29 որոշումը՝ COVID-19-ի վերաբերյալ Գլենդելի քաղաքային խորհրդի լիազորության ներքո տրված հասարակական կարգադրության մասին, որն ընդունվել է 2020 թվականի մարտի 16-ին, և գործում է մինչև 2020 թվականի մարտի 31-ը, պետք է երկարաձգի իր գործողության ժամկետը և ուժի մեջ մնա մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը: Հետագայում դրա գործողության ժամկետը կարող է երկարացվել՝ քաղաքային խորհրդի կամ արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի կողմից անհրաժեշտ համարելու դեպքում:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հասարակական կարգադրությունների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր անհատ ծառայող պետք է օգտագործի իր հայեցողությունն՝ այս կարգադրության կատարման շրջանակներում, և մշտապես մտապահի կարգադրության նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

ԲԱԺԻՆ 5. Սույն կարգադրությունը կարող է երկարաձգվել, նախքան 2020 թ. ապրիլի 30-ը:

Ընդունվել է Գլենդել Քաղաքային Խորհրդի կողմից՝ 2020 թ. մարտի 24-ին:

Ara J. Najarian

Քաղաքապետ

ՀԱՍՏԱՏՈՒՄ՝

Aram Adjemian

DocuSign Envelope ID: 4E6E5AD6-4496-485F-B984-DF059863B39C

Քաղաքային խորհրդի քարտուղար

ՈՐՊԵՍ ՁԵՎ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է՝

Michael J. Garcia

Քաղաքի դատախազ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳ)

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ) SS.

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ)

Ես՝ Արդաշես Քասախյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-33 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ հերթական նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մարտի 24-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով՝

Այո՝ Աղաջանյան, Դիվայն, Կարապետյան, Քուինթերո, Նաջարյան
Ոչ՝
Բացակա՝
Ձեռնպահ՝

Aram Adjemian

Քաղաքային խորհրդի քարտուղար